Արագած

Մակերես՝ 25.50կմ^2

Բնակչություն՝ 3040

Ապարանի տարածաշրջանի Արագած համայնքը գտնվում է Արագած լեռան ստորոտին, ծովի մակերևույթից 2000 և ավելի մետր բարձրության վրա, ՀՀ Արագածոտն մարզի վարչական տարածքում: Գյուղը հիմնադրվել է 1828-1830 թթ. Արևմտյան Հայաստանի Մուշ, Տարոն և Ալաշկերտ գավառներից գաղթած հայ ընտանիքների վերաբնակեցմամբ: ՀԻմնադրման պահին գյուղը կոչվել է Ջամուշլու, որը հայերենով կոչվում է <<Գոմշանոց>> այնուհետև 1840 թ-ից բնակավայրը անվանվել է Ղազնաֆար: Իսկ 1948 թ. սեպտեմբերի 10-ից գյուղը վերանվանվել է Արագած:
Գյուղը տարածված է Արագածի լանջերից սկիզբ առնող Գեղարոտ գետի երկու ափերին: Ապարան քաղաքից գտնվում է 15 կմ, մարզկենտրոն Աշտարակից՝ 25 կմ և Երևանից՝ 40 կմ հեռավորության վրա:
Համայնքի վարչական տարածքը կազմում է 2480 հա, որից
• բնակավայրի և տնամերձ հողամասերի տարածքը կազմում է 220 հա,
• վարելահողեր՝ 634 հա
• խոտհարքեր՝ 136 հա
• արոտներ՝ 986 հա
Համայնքում հաշվարկված է 935 ծուխ, որից 880-ը օգտվել է հողի սեփականաշնորհումից: Սեփականաշնորհման մեկ հողաբաժինը կազմում է 0.53 հա: Գյուղը զբաղվում է ինչպես հողագործությամբ, այնպես էլ անասնապահությամբ: Հողագործության հիմնական ուղղություններն են կարտոֆիլի, կաղամբի և հացահատիկի մշակությունները իսկ անասնապահության մեջ՝ խոշոր եղջերավոր անասունների պահպանումն ու խնամքը:
Տարածքին և գյուղին բնորոշ է խստաշունչ ձմեռներով և զով ամառներով կլիմայական պայմանները: Վեգետացիոն շրջանի տևողությունը 170-185 օր է: Օդի բացարձակ ջերմաստիճանը հասնում է -360C -- 380C-ի իսկ առավելագույնը +270C -+350C-ի: Ձյան շերտի բարձրությունը հասնում է մինչև 120-170 սմ: Առաջին ձյունը տեղում է հոկտեմբերի 2-րդ տասնօրյակից, իսկ շերտը պահպանվում է մինչը մայիսի 1-ին տասնօրյակը:
Բնակչության ընդհանուր թիվը կազմում է 4000 մարդ:
Բնակչության տարեկան միջին աճը կազմում է 42 մարդ/տարի:
Բարձրագույն կրթությամբ բնակչության թիվը կազմում է 420 մարդ:
Հետբուհական (ասպիրանտական) կրթությամբ 13 մարդ: